45. ԿԸՏԱԿԸ

Ղարարաղի կյուղերան մինըմը մին կյուղացի, անըմը Ծատուր, մըեռելիս վախտը դերին կանչըմ ա, կըտակ անըմ։

— Կյիրի՛, հենգյ հազար մանեթ Մանիշակ անըմավեր ըխճը-կանըս, իրեք հազար մանեթ Կյեվերք անըմավեր տըղես, վեց հազար մանեթ Զառի անըմավեր կընդանըս, էրկու-էրկու հազար մանեթ էլ էն մընացած քյուլփանեթներես, հազար մանեթ էլ քյըեզ։

Դերը մտրածըմ ա, մըտածըմ ասըմ.— Պա յըես քյըեզ լոխճան շատ սիրի՞մ, տու ինձ հազար մանեթ տա՞ս, պա իտի պեն կինի՞։

Ծատուրը մըտածըմ ա, ասըմ.— Ա՛ դեր, լավ, քյըեզ էլ էրկու հազար մանեթ ըմ կըտակըմ։

Տերտերը օռած, փըքված քյինըմ ա տոն, կընգանը ասըմ.— Ա՛ կընեդյ, պա ասել չը՞ս, Ծատին ինձ էրկու հազար մանեթ ա կըտակալ, դե էլ հի՞նչ դարդ օնինքյ։

Կընեգյն ասըմ ա.— Պա Ծատին էտքան փողը ըշտըղա կըտա՞։

Դերը մաննը տինըմ ա քունքին, ասըմ.— Ղորթ ըս ասը՞մ, բա ըշտըղան կըտա՞, դե վեր իտի յա, քյինիմ հըրցընիմ, տըեսնամ ըշտըղան կըտա։

Քյինըմ ա նի մընընըմ Ծատուրեն տոնը, ասըմ.— Ա՛ Ծատուր։

Թա.— Հի՞նչ ա՞։

— Ա՛ Ծատուր, բա ըշտըղա՞ն կըտաս էրկուհազար մանեթը։

Ծատին յուրղանեն տական վրեննները հանըմ ա, նշանց տալավ ասըմ.— Վրեններիս տական կըտամ, վրեններիս տական։